

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի կես տարվան 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մեջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք օ ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացը կիրակի եւ տօն օրերից):

Յայտարարությունները ընդունվում է առանց վճարի:

Յայտարարությունների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ք օ ն № 253.

ԲՈՎԱԼԳԱՎՈՒԹԻՒՆ

Տան ծառաների հարցը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Այժմ էլ չօչափելի գործ. Արձագանքներ. Օպերային ներկայացումները. Նամակ Հին-Նախիջևանից, Նամակ Շուշու գաւառից, Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտակուլթեան մէջ դեռ շարունակում է իշխել Հին, ստրկատիրական ոգին զէպի ծառաները: Նոյն իսկ կրթված և քաղաքակրթական փայլ ստացած անձանց մի նշանաւոր մասը ամենափրաւորական և անարդար կերպով է վերաբերվում ծառայող անձին: Փոյլատրելի է համարվում ծառայողի անվերջ պահանջներ անել, բանեցնել ստանց պատշաճաւոր վարձատրութիւնի տարու, գրկել ընկն և հանգստութիւնից և երբեմն գրկել նրան այն ուժեղից, որ պէտք է հասնէր պայմանախօսութեան համաձայն:

ՏԱՆ ԵՄԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Մի քանի անգամ հրատարակ է գրվել թէ մայրաքաղաքի և թէ գաւառական մասնակի մէջ տան ծառաների հարցը և առանց վերջնական լուծում ստանալու դարձեալ վերադառնալով քննութեան սպարէզից: Վեանքի ամենօրեայ, ամենասովորական այդ հարցը դժուար լուծելի հարցերից մէկն է: Մանաւանդ նա դժուար է այնպիսի տեղերում, ինչպէս են Փիֆլիսը, Բաղուն, ուր կիսափրկ ինքնակրթի և կարճ միջոցում մեծ կոնֆուսութիւններ, ուր թէ տէրերը և թէ նրանց ծառաները պատկանում են զանազան ազգութիւնների, զանազան կուլտուրական սովորութիւնների և ունեն շատ տարբեր հասկացողութիւններ իրերի և բարոյական պահանջների մասին:

Տէրերը զանազանում են ծառաների վրա, իսկ ծառաները տէրերի վրա: Դա անվերջ մի գանգատ է, որի գործնական արտայայտութիւնը կայանում է այն բանի մէջ, որ շատ յաճախ ծառաները տեղափոխվում են անխից սուս, երբէք յոյս չունենալով մնալ մի տեղ շարունակ, ամբողջ տարիներ:

Մենք գիտենք, թէ ինչպիսի պակասութիւն ունեցող անձինք ծառայ են վարձվում աներում, մենք գիտենք, թէ ինչպէս յաճախ նրանք թող են տալիս իրանց

զանազան շարադրութիւններ, և որքան անտարբեր ու անհոգ են վերաբերվում զէպի իրանց տէրերը, բայց և այնպէս զխաւոր վնասողները և զրկողները լինում են մեծ մասամբ ծառաները: Մեր հասարակութեան մէջ դեռ շարունակում է իշխել Հին, ստրկատիրական ոգին զէպի ծառաները: Նոյն իսկ կրթված և քաղաքակրթական փայլ ստացած անձանց մի նշանաւոր մասը ամենափրաւորական և անարդար կերպով է վերաբերվում ծառայող անձին: Փոյլատրելի է համարվում ծառայողի անվերջ պահանջներ անել, բանեցնել ստանց պատշաճաւոր վարձատրութիւնի տարու, գրկել ընկն և հանգստութիւնից և երբեմն գրկել նրան այն ուժեղից, որ պէտք է հասնէր պայմանախօսութեան համաձայն:

Մի քանի կետերի վերաբերութեամբ, օրինակ, վարձատրութեան հարցում, կարելի էր կանոնաւորել տէրերի և ծառաների յարաբերութիւնները և պարտաւորական պայմանախօսութեան սահմանները: Բայց պայմանախօսութեան քիչ կօզնի գործիք և որոշ զէպերում նա կարող է ձրնալ զեր կատարել վնասված կողմի համար: Այստեղ գեր պէտք է կատարէ պարտաճանաչութեան գաղափարի զարգացումը հասարակութեան մէջ: Մասնաւոր կարող էին նոյնպէս մտածել համայնական կազմակերպութեան մասին և հոգ տանել իրանց բարոյական շահերի զարգացման և նրանց պաշտպանութեան մասին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՅԺՄ ԷՆ ՇՕՇԱՓԵԼԻ ԳՈՐԾ

Մետաւ Գրիգոր Զանչեան, եւ մենք իսկոյն զգացինք, որ պարտաւոր ենք յարգել նրա յիշատակը համակրական ցոյցերով: «Մշակի» ընտրված են ծա, որ մինչև այդ ժամանակ երբեմնապէս միայն աչքի տակովն էի նայում այդ զոյգի վրա, այդ սպայական կօմպլիմենտ լսելով ակամայ շուռ եկայ, որ մի տեսնեմ թէ դա ինչ գոհար է: Հետաքրքրութիւնս անպատիժ չը մնաց... Դա մի միջին տարիքի կին էր, գուցէ եւ անց միջին տարիքից. մէկը այն կանանցից, որոնք ամեն կերպ աշխատելով ջանել երեւալ, աւելի եւս քաւթառնին են տալիս. որոնց, ինչպէս ասում են, հայհանող գնացել, վնայ-վնայ է մնացել... Վերան աշխարհի քարեր թափած և հասակին անհամապատասխան նախաշուն փայլանքով իրան զարդարած, նա նկարչական մեծ ջանք ու հմտութիւն էր գործ դրած իր թոշնոց երեսի վրա... որ միայն մօտիկից կարելի էր նկատել: Յայտնի է, որ կանացիական նկարչութեան այդ արուեստը մեր ժամանակներում համարեա կատարելութեան է հասած...

Ասում են, համարձակութիւնը քաղաքներ է առնում: Դա ասած է, անշուշտ, պատերազմական կեանքի, անվնիւր հերոսների վերաբերմամբ. բայց այդ սասցուածն այլաբանօրէն յաճախ գործ է ածվում նաեւ մարդկանց առօրեայ կենցաղավարական նիստ ու կացում: Փրանտ սպայի աներեսութիւնը տեսնելով և զէպիք ինքնազոն, յաղթական արտայայտութիւնը դիտելով, չը գիտեմ ինչու, իմ մտքում պտտվում էր շարունակ յիշեալ սասցուածքի մի այլ, նոր ձեւափոխութիւնը՝ «պատաճութիւնը կանայք է նուաճում»: Սպան իսկապէս իմ աչքի առաջ ծանօթութիւն կապեց թէ այդ կնոջ եւ թէ ուրիշ շատ կանանց հետ: Եւ նրա միակ զէպը համարձակ... այսինքն՝ աներեսութիւնն էր: Բայց ես չնդիպել իմ նամակի նիւթից, է՛հ, ինչ արած, ճանապարհորդական տպաւորութիւններն էլ միշտ անկանոն և խանդավառն են լինում:

«Հարաւի գոհար»... Ուրեմն Եւլտան այդպիսի մի բանաստեղծական անուն է կրում,—մտածում էի ես, մտեանալով նաւամատոյցին եւ

թերցողները գիտեն թէ որպիսի մեծ չափեր ընդունեցին այդ ցոյցերը: Սամարկանդից եւ Իրկուտակից մինչև Պարիզ, Պետերբուրգից մինչև Քաբիլ, ամեն տեղ, ուր հայը ունի ազդեցութեան, մտեր վառվեցին, խունկ ծխեց, փոսուր հողեհանգիստների կատարվեցին, քահանաները դաժանականներ խօսեցին, ժողովուրդը զգացվեց, ցաւակցութիւն յայտնեց: Ամեն տեղ խորին երախտագիտութեամբ իմացաւ, որ շատ լաւ, շատ բարի մարդ էր Զանչեանը:

Եւ շատ զեղեցիկ է այդ ազգը սպացուցեց, որ գիտէ պարտաճանաչ լինել զէպի իր լաւագոյն ներկայացուցիչներից մէկը: Իսկ սա մի նշան է, որ այդպիսի ազգը արժանի է ունենալու նշանաւոր գործիչներ:

Բայց բաւականանք մեր այդ համակրական ցոյցերով, որոնք մեծ մասամբ խօսքի շարժանից դուրս չեկան Գրիգոր Զանչեանը Մօսկվայում ունի գերեզման եւ այդ գերեզմանի վրա պէտք է դնել մահարձան:

Եւ սա հայ հասարակութեան պարտքն է: Այստեղ արդէն չօչափելի գործ պէտք է ցոյց տալ: Մեր ցաւակցութիւնների, ազօթքների ձայները մարել են, կը մոռացվեն վաղը, միւս օրը, եթէ արդէն չեն մոռացվել: Մօսքով համակրել մեծ առաքելութիւնն է: Մօսքը, զգացմունքը պէտք է մարմնանայ շօշափելի նիւթ, մնայուն գործ դառնայ:

Մենք քարերի եւ պղնձի երկրպագուներ չենք. Զանչեանը ոչ այնքան աննշան մարդ է, որ փառաւոր յուշարձաններով յիշեցնել տայ իր անունը, ոչ էլ այնքան աղքատ է կամ այնքան մոռացված իր ազգականներից եւ բարեկամներից, որ նրա հերեզմանը մնայ մի անդրի ու անյիշատակ հողաթումբում: Ո՛չ, նա իր ստղանդով տեղ է պատրաստել իր համար պատմութեան էջերում, որոնց դիմացիանութեան եւ յարասեւութեան չէ կարող համնել երկաթն ու որձաքարը:

Բայց ուրիշ բան է, երբ յուշարձանը ներկայացնում է մի գաղափար: Ուրիշ բան է, երբ մի ներքին բաւականութիւն զգում, որ ոչ միայն պէտք է լաւ տեսնեմ այդ պեճ վայրը, այլ եւ ամբարներ սարքում մէջը:

անմոռանալի գործիչի վրա կանգնում է մի, թէկուզ համեստ, արձան, որ մի ամբողջ ժողովրդի երախտագիտութիւնն է արտայայտում, երախտագիտութիւն զէպի գործիչի լուսաւոր գործերը, երախտագիտութիւն զէպի տաղանքը, զէպի ան երկնային կրակը, որ իրանց մէջ կրկու պաշտօն ստանում են շատ քչերը, ընտրեալները:

Ու մենք պարտաւոր ենք այդ երախտագիտական յուշարձանը դնել Զանչեանի գերեզմանի վրա: Երբ թիւրքաց Հայաստանի մի խուլ, կորած անկիւնում, մի Բալուխ մէջ, հայ որբերը, ներկայ լինելով Զանչեանի հոգեհանգստին, զգում են, որ զրկվել են իրանց հօրից, ինչ պէտք է անենք մենք, որ ակնաստես ենք եղել թէ ինչպէս էր հանգուցեալը պաշտպանում այդ հաղորաւոր որբերի դատը: Երբ ուռաց առաջաւոր մտածող միաբան վկայում է, որ Զանչեան ցոյց տուց թէ կարելի է լինել իր ազգը սիրող, իր ազգի ցաւերին հոգով նուիրված հայ եւ մի եւ նոյն ժամանակ մի մարդ, ամբողջ մարդկութեան բարեկամ մարդ, համաշխարհային լոյսի, ազատութեան մի ուղեւորված երգիչ, —միթէ մենք չենք զգում, որ այդպիսի մի հայի եւ մարդու գերեզմանի համար ամենալաւ, ամենարժանի գործը պէտք է լինի մեր ամենքիս, ընդհանուրի արտից ըղիւսած մի նուէրը...

Տարօրինակ, վայրենի բան կը լինէր այս հարցերին բացասական պատասխան տալ: Տարօրինակ կը լինէր մեր այնքան հոգեհանգիստներից, այնքան ճառերից, ցաւակցութիւններից յետոյ թողնել, որ Զանչեանի գերեզմանի վրա չը լինի մի այնպիսի մահարձան, որ արտայայտէր մեր ժողովրդի համայնական զգացմունքները: Միայն այդպիսի մահարձանն է, որ արժանի է ցոյց տալու սպագաց սերունդներին Զանչեանի պէս մարդկանց յաւիտենական հանգստարանը:

Ուրեմն, խօսքից այժմ անցք գործի. Տուէք ձեր նուէրները Զանչեանի մահարձանի համար...

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՐԻՄԻ ԱՓԵՐԻՑ

VI

«Հարաւի գոհար»

Երբ առաջին անգամ շողեցաւ մօտենում էի Եւլտանի նաւամատոյցին եւ տախտակամասին վրա կանգնած՝ բազմաթիւ ճանապարհորդների հետ միասին հեռուից դիտում էի Եւլտան,—նա շատ հրապուրիչ տպաւորութիւն գործեց ինձ վրա իր գեղանկար արտաքինով և կոկիկ դիրքով:

Ճանապարհորդներից ոմանք, որոնք, ինչպէս երեւում էր, առաջին անգամը չէր, որ Եւլտան էին գալիս, զօրասանքով պատմում էին իրանց ծանօթներին այդ գրաւիչ վայրի գեղեցկութիւնները, մասնացոյց էին անում այս ու այն ծովազրեայ շքեղ շէնքերը, հիւրանոցները. ոմանք էլ, որոնք առաջին անգամն էին այցելում այս կողմերը, կամ մի ականջով ունկնդիր էին այդ զովասանքներին, կամ զմայլված՝ լուռ ու մունջ դիտում էին այդ ծովազրեայ պատկերը: Կողքին կանգնած էր մի նոր թխված, ֆրանտ սպայ, որը Սեւաստօպօլից մինչև Եւլտա շողեցաւ տախտակամասի վրա շարունակ զէս ու զէն ընկնելով, այս ու այն կնոջ վրա անպակաս հայեացքներ նետելով և իր նուօրն երկ չլսիկոցով ուղեւորների գահէն տանելով, արդէն յայտնի էր եղած ամենքիս: Նա, դանախով իր ծանօթ կնոջը եւ Եւլտան ցոյց տալով՝ ասաց. «Էլաւ նայեցէք, սա «հարաւի գոհարն» է. այդպէս են կոչում այստեղ այդ կուրորտը: Հապա աչքերին մի անհամեստ արտայայտութիւն տալով՝ փոքր ինչ կամայ ձայնով, բայց այնպէս կամաց, որ չըրկապատողներս շատ լաւ լսեցինք, նա աւելացրեց. «Իսկ զուք Պետերբուրգի գոհար էք»:

Սրեւաց, որ երկուսն էլ Պետերբուրգի պը-

քերի շուրջ շարված անհամար, վայելչազեղ կրկարներով օղում նկարված ուրուագծերը ներկայացնում են մի շատ խորհրդաւոր տեսարան, որից աչք չես կարողանում պոկել նրանք նման են օղում շարված հսկայահասակ պահպանների, որոնք, կարծես, դիչերային ժամին պահում, պաշտպանում են քաղաքի նիրհն ու անգործութիւնը: Եւլտան լեռնաշղթայի կողմից գտնւում են խաղողի այգեւտաններ և թուփուների ցանքեր, որոնք տեղային արդիւնաբերութեան եւ բնիկ ժողովրդի ապրուստի զլլուաւոր աղբիւրն են կազմում: Յետոյ սկսվում են մեծ մասամբ կաղնու եւ սոճիի դարեւոր, խիտ անտառներ եւ ապա—«Եւլտա» լեռնաշղթայի վերջնական գիծը, որ ձգվում է օդի մէջ արեւելքից արեւմուտք եւ կազմված է մոլորագոյն, լերի ապառաժներից: «Եւլտա» լեռնաշղթան Եւլտայի մօտ կիսաղիլի ձեւ ունի, որի երկու կողմերից՝ արեւմուտքից եւ արեւելքից՝ երկու լեռնաձիւղեր կամ լեռնաարունքներ խոր մանելով ծովը եւ մի տեսակ հրտանդաններ կաղնուով, եւս առաւել գեղանկար տեսք են տալիս Եւլտայի դիրքին: Եւլտան այդ կիսաղիլում դեռնողված՝ ուղղակի նման է ամփիթէատրօնի, երբ ծովի կողմից եւ նայում նրան Գեղեցիկ եւ միանգամայն առողջաբար է Եւլտայի նաեւ կլիման: «Եւլտա» լեռնաշղթան, որպէս բնական անխորտակելի պատնէշ, պաշտպանելով այս հրաշալի վայրը հիւսիսի դժնաշունչ հողմերից, միշտ ջերմ ու փափուկ է պահում նրա օդը եւ բարեբեր և զանազան արեւելք, յաւերժ վնաս, յաւերժ փառահեղ ծովի կախարհանքը—եւ դուք կը ստանաք Եւլտայի պատկերը, որն, իբրեւ, արժանի է «հարաւի գոհար» կոչվելու:

Բայց այժմ տեսնենք, թէ այդ «գոհարը», իբրեւ կուրորտ, իբրեւ հիւանդներ յոյս ու ապաւէն, որքան է համապատասխանում իր սիրուն անունին: Ալ. Մատուրեան

ԱՐՁԱՎԱՆՔՆԵՐ

XIX

Չը գիտեմ ուշադրութիւն դարձրին ընթերցողները կազմուածից գրված եւ «Մշակի» 202 համարում տպված նամակի վրա: Ետո բացարձակ փաստ էր հաղորդված նրա մէջ: Բացարձակ եւ մի եւ նոյն ժամանակ ընտրոյ, որքան էլ առաջին անգամից պարագրքային թւի այդ բաների գուցարութիւնը:

Բացարձակ, որովհետեւ կազմուածի հարուստներից մէկը ուզում է անպատճառ մի խոչոր քարերարութիւն» անկ տեղական ժողովրդին, իսկ ժողովուրդը հրաժարվելով հրաժարվում է այդ «քարերարութիւնից»:

Բնորոյ, որովհետեւ տեղական հարուստի վարձուքի մէջ, որ բարերարութիւնից հրաժարվելու աստիճանի դժգոհութիւն է պատճառել ժողովրդին, արտայայտվել է, սովորականից մի քիչ աւելի կոպտութեամբ ու անտակտութեամբ, մեր «քարերարներին» անգին մեծամասնութեան հոգեբանութիւնը, որ ինքն էլ իր հիմքը եւ համայնարարականը (կորրէկտիվը) ունի ամբողջ ժողովրդի հոգեբանութեան մէջ:

Անա փաստը, թղթակցի հաղորդածով:

«Բարերարը»—անունը մեզ հետաքրքիր է— իր հաշուով եկեղեցի է շինել տալիս, բայց շինող բանուորներին հայնդում է անվայել, սրբապիղծ խօսքերով եւ հարտահարում է, կորելով վարձերը: Կարսի վիճակի յաջորդ Եղիշէ վարդապետը նկատողութիւն է անում քարերարին: զրա համար եւ ստանում է կոպիտ, անվայել պատասխան: Միջամտում են տեղացի գործիչներ, նրանց էլ վերաբերում է «քարերարը»: Ժողովրդի համբերութիւնը հասնում է: Կազմուածիցները վճռում են լինել քարերարին ձեռքից եկեղեցու շինութեան գործը եւ առաջ տանել ընդհանուրի ծախսով եւ հասարակական հակողութեան տակ: Եղիշէ վարդապետը հեռագրում է Էջմիածին եւ կաթողիկոսից հաստատութիւն է ստանում ժողովրդական վճիռն եւ հրահանգ՝ նշանակելու (ընտրել տալու) այդ նը պատկով 12 հոգաբարձուներ:

Թղթակցի ասելով, կազմուածից վախենալով թէ մի գուցէ յանկարծ փոխվի այդ համակրկի կարգադրութիւնը, վճռել են մի բազմաստորագիր հեռագիր ուղարկել Էջմիածին, խնդրելով անխախտ պահել եղած որոշումը:

Անցնեք բուն հարցին:

Ինչ վերաբերում է այդ ընդհարմանը, իբրեւ մասնաւոր դէպքի, նա պատիւ է բերում կազմուածիցներին, Կարսի յաջորդին եւ Էջմիածին: Կազմուածիցների վարձուքը կարող է օրինակելի համարվել այն տեսակէտից, որ ժողովուրդը չի պէտք է երբէք որ եւ է ռուսաց «մանր» համար ծախել իր անդրանկութիւնը այն կամ այն «քարերարին»: Բայց արդեօք հէնց այդ ընդհարման հարաւորութիւնը հիմք է տալիս կարծելու, որ կազմուածիցները միշտ այդպէս օրինակելի չեն եղել իրանց վերաբերմունքի մէջ դէպի գնահատան «քարերարները», որոնց ձախ ձեռքը շատ դժուարութեամբ է բացվում նուիրատուութիւնների համար, բայց աջ ձեռքը միշտ մեկնված է հասարակական իրաւունքներ յափշտակելու համար եւ որոնց ամենայն քայլը արձագանք է «Всё мое, скарзаю злато» («Ամեն ինչ իմն է, ասաց ոսկին»):

Մեզ թւում է, թէ հէնց դրանումն է չարիքի արատը: Ոչ միայն կազմուածիցները, այլ եւ երեւանցիները, թիֆլիսցիները, մի խօսքով բոլոր հայերս՝ չափազանց մեծ յարգանք ենք ստանում դէպի փողը եւ փողաւորը, չափազանց քիչ ենք գնահատում մեր պատիւն ու իրաւունքները եւ չափազանց շատ ենք սիրում գնահատան ռուսացիները:

Վրդովմենը ամբարտաւան «քարերարներին» անսահման անորոշակներից ու յաւակութիւններից, յարձակվեք նրանց վրա, նշաւակութեան սրէնին կապեմք նրանց, բայց չը մտնանանք, որ ամեն ժողովուրդը արժանի է «իր բարերարներին»:

Եթէ շատ «քարերարներ» կարծում են, թէ բարերարված հասարակութիւնը պէտք է իրանց ճորտը լինի, իրանց ցուցմունքով տանի իր գործերը, իրանց արբանակների թելադրութեամբ կատարել քանանանքի, հոգաբարձուների եւ այլն ընտրութիւնը,—այդ նրանից է, որ մենք շատ արժանազիր ենք ներկայացնել հոլովելի հօտ Նրբ «քարերարները» տեսնեն, որ մենք գիտակցում ենք մեր իրաւունքները եւ արժանապատուութիւնը, հաւատացած եղէք, որ նրանք կարծ կը պահեն իրանց լեզուները եւ կը չափաւորեն իրանց յաւակութիւնները:

Առանձին «քարերարներին» արգարացնելու

համար չէ, որ մենք չեչտուծ ենք այստեղ ընդհանուրի մեղաւորութիւնը: Ոչ. մենք այդ անուն ենք, որովհետեւ այդպիսի դէպքերում յորդորանքները եւ նախադրանքները ուղղվում են սովորաբար միակողմանի կերպով, միմիայն նրանց, որոնք կազմուածի «քարերարին» նման ստորացնում եւ զրկում են ժողովրդին, կարծեք թէ ինքը ժողովուրդը մեղաւոր չէ այդ բանում, կարծեք թէ պատիւ ծախելը նոյնքան ամօթալի չէ, որքան եւ անխղճութիւնը:

Բաւական է ինչքան աշխատեցինք ներկայացնել ժողովուրդը իբրեւ միութեամբ երեւանցիներ մի բազմութիւն. ժամանակ է, որ հասկանաք, մենք բոլորս եւ ինքը ժողովուրդը մեղ հետ, որ նա արժանի է չափահասի պատուի, բայց եւ կրելու է չափահասի պատասխանատուութիւն: S. Յ.

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Հոկտեմբերի 26-ին, Արքունական թատրոնում ներկայացրին առաջի անգամ նոր օպերա «Парская Невеста» (Պարսկայի հարս) 3 գործողութեամբ եւ 4 պատկերով, հեղինակութիւն Լ. Մէյի, երաժշտութիւն Բիսկի-Կորսակովի: Ներկայացումը գրաւել էր մեծ բազմութիւն:

Անցքը պատանում է Մոսկվայի մօտ Ալէքսանդրովսկ անունոված արուարձանում (Ситово-Д), 1572 թ., Իվան Գրոզնու օրով: Օպերիչինի Գրեազնովը խնդրում է քրոյարին Սորակինից նրա աղջկայ, Մարֆայի ձեռքը եւ ստանում է մերժում, որովհետեւ Մարֆան արդէն նշանված է քրոյարին: Լիկովի հետ Գրեազնով, օրհորդին կախարհելու համար, որպէս զի իրան սիրէ, թագաւորական բժիշկ գերմանացի Բոյմէլիցի մեծ գնով դեղ է վերցնում: Գրեազնովի սիրուհին, Լիւբաչա, լսելով այդ, նոյն բժիշկից իր պատիւ գնով վերցնում է թոյն եւ գաղտնի փոխում է նրան միւս դեղի հետ: Հարանիքը չորհարարին՝ Գրեազնով հարսի բաժակի մէջ խառնում է այդ դեղը, որ եւ խում է հարսը: Այդտեղ «քրոյարին» պատգամաւորներ են գալիս, թէ թագաւորը բոլոր գեղեցկուհիներին միջից իրան կնուծեան հարսնացուն ընտրեց Մարֆային: Մարսավում են: Մարֆան խելագարվում է, որով Լիկով յանցաւոր է ճանաչվում եւ սպանվում թագաւորի հրահանգով: Գրեազնով խղճահարվում է եւ խոստովանում, որ Մարֆան խելագարվել է իր սուտը գեղեցկ եւ առաջարկում է իրան դատել Վազլով առաջն է առնում Լիւբաչան եւ ասում, որ նրա սուտը դեղ չէր, այլ թոյն, որը ինքն էր գրել դեղի տեղ: Դաչնի հարուստով Գրեազնով սպանում է նրան: Լիւբաչա ընկնում է մեռած, պալատականները մնում են Գրեազնովի, իսկ Մարֆան իր գանից դիմում է Գրեազնովին, կարծելով, թէ նա իր փեսայ Լիկովն է, եւ ասում՝ «եկ ուրեմն, Վանիս, էգուց ինձ մտա»:

Գլխաւոր դերերն են՝ Մարֆա—օր. Պապախան, Լիւբաչա—Պլատոնովա, Լիկով—Բօրիսենկօ, Գրեազնով—Սվետլով եւ Սօբակին—Սիբիրեակով:

Ուղեւորութեան (երաժշտական յառաջան) յետոյ՝ օպերան սկսվում է Գրեազնովի «Մտքից դուրս չէ գալիս Մարֆայի գեղեցկութիւնը» խօսքերով, որը մի պարզ, բայց շատ հնչիւն աւրիա է: Այս գործողութիւնը կարելի է ասել գրաւել ոչինչ չունի, բայց Լիւբաչայի արիաթիւրի: Երկրորդ գործողութիւնը ներկայացնում է փողով: Նախ քան տուն մտնելը, հարս, փեսայ, հայր եւ ընկերուհի երգում են այնպիսի մի գեղեցիկ կլարտես, որը իրաւամբ պէտք է համարել օպերայի ամենալաւ կտորը: Տանելիք ներս մտնելուց յետոյ, բնւթ մնում է դատարի: Այստեղ երաժշտութիւնը կատարում է ինտերմենցօ (միջանկեալ), որը իմաստով տպաւորութիւն է թողնում իր սրտատուչ եւ մի եւ նոյն ժամանակ վսեմ եղանակով: Երրորդ գործողութիւնը—Սօբակինի դաշխնում—հարսանիքի հանդէսի պատրաստութիւնն է: Մինչեւ այս ժամանակ ամենից մեծ գեր էր կատարել Գրեազնով—Սվետլով, որ ունի թէ շատ բեկիտատիւներ, թէ արիաներ եւ թէ անսաղբ: Այստեղ Բօրիսենկօյի երկրորդ արիան շատ նշանաւոր է: Նմանապէս եւ միւս անձինք գնալով՝ զօրաւոր հատուածներ են երգում: Զորորդ պատկերը—թագաւորի սպաւան է: Այս գործողութիւնն է օպերայի լուծումը: Անուն հասարակական հարսը—օր. Պապայիան բազմում է զահը, բայց խելագար: Նրա դերը օպերայի վերջում անհամեմատ մեծ, բարձր եւ ազդու է, քան միւս տեղերը:

Ինչպէս եւ սպասվում էր՝ օր. Պապայիան պիեսայի պատկն էր. սլաւոնական իր մեծ եւ

գժուար դերը բաւական լաւ տարաւ: Բօրիսենկօյի դերը շատ փոքր եւ անգոյն է: Հայրը—Սիբիրեակով ընտրոյ տիպ է, իսկ Գրեազնով շատ լաւ դեր է, եթէ լաւ կատարեն. պ. Սվետլով բաւական լաւ ձայնով երգեց, բայց ձեւը եւ խաղը բոլորովին անհամապատասխան էին, չը նայելով որ արտիստը շատ էր աշխատում:

Խմբերը բոլորն էլ բաւական գեղեցիկ են եւ զուտ ուսուական: Օրկեստրի կտորները ծայրից մինչեւ վերջ ոգեւորված կարելի է լսել: Բեկիտատիւր այս օպերայում աւելի երգեցողական է, քան թէ խօսակցական, ինչպէս լինում է շատ օպերաներում, եւ սա լաւ է:

Բիսկի—Կորսակով իր «Парская Невеста»-ն աւելի հմտաբար, գեղարուեստական ճաշակով եւ տաղանդով է գրել, քան թէ իր միւս օպերաները, որոնք այնպիսի աջողութիւն չեն ունեցել, ինչպէս այս վերջինս:

Մրանով ուսուց օպերաների ցուցակը հարստացաւ մի օպերայով եւս, որ միշտ կարող է ծրագրում մեծ տեղ բռնել:

Կարա-Մուրգա

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԳԱՒԱՌԻՑ

Կուլիբէկ-դիգա գիւղ, հոկտ. 7-ին Այժմ, երբ աշունը բայց է արել իր առատ ձեռքը եւ վարձարում է քրտնաշան երկրագործի վատագործ, մենք, կատարելով մի շարք հետազոտութիւններ գիւղացու նիտ ու կայի վրա, չենք կարող լուծեան տալ այն աղէտալի դէպքերը, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ աշխատող ձեռքերի, խնամող ոյժերի բացակայութիւնից առաջ եկած հետեւանքներ, հետեւանքներ, որոնք, զբաղողաբար, գնալով լայն ծաւալ են ստանում, թողնելով իրանց մեռելային կիւրքը եւ սեւ հեռքերը գիւղական աշխարհում:

Համեմատելով գիւղում մշտակեաց գիւղացու թէ խաղողի, թէ ցորենի եւ թէ ուրիշ բերքերի յատկութիւնը պանդխտութեան մէջ թափառող եւ բաղդ որոնող գիւղացիների բերքի հետ, մենք գալիս ենք այն կարկաչուցութեան, որ առաջինների թէ այգիները, թէ վարելահողերը պատշաճ կերպով մշակված են եւ խնամվում են իր ժամանակին, իսկ պանդխտների այգիներն ու հողերը, չնորհիւ այն պայմանի, որ թշուառ գեղջկուհին, որի հողացողութեան է մնում յաճախ ամբողջ շաբաթը, չէ կարողանում իր ժամանակին հող վարել, այդի փորող, ջրող գանել, քանի գնում խօսպանանում են եւ նրանց բերքը կորցնում է լաւ յատկութիւնը, դեռ չենք ասում քանակութիւնը: Ինչ պլտի անէ բանուորը, որ շատ անգամ կատարում է իրան յանձնված գործը այնպէս, ինչպէս ինքն է կամենում, կամ ինչպէս իր համար աւելի հեշտ է. չէ որ խեղճ գեղջկուհին յաճախ չէ կարողանում հսկել, թէ արդեօք ինչ է անում բանուորը: Եւ այսպէս հողը հետզհետէ կորցնում է իր ոյժը եւ զրկվում է պտղաբերութեան ընդունակութիւնից:

Իսկ ինչ է անում այդ ժամանակներում պանդխտութեան մէջ մեր թափառաչըլիկը, նա իր վատակամ կողմէնիւրով չէ գլանում այցելել յաճախ գինեաները Բազումի երկրպագիտու, շարունակում է յաճախել հրապարակական տներ, ուր վարակվելով վերադառնում է գիւղը նոյն արտիստ իր թշուառ ամուսնուն ենթարկելու, որից յետոյ գործակալ շտապում է իր սիրած վայրը: Տեսնելով, որ ամուսինը խախտել է ամուսնութեան սուրբ կապը, տեսնելով, որ նրա սրտի մէջ մտել է ամեն նուիրական գեղացունքը, ինքը՝ անտէր մնացած գեղջկուհին ակամայ վրէժխնդիր է լինում իր ամուսնուն եւ, չը կարողանալով խեղդել իր նախանձը եւ զայրվելով, ոտքը մեկնում է դէպի անբարոյականութեան ուղին եւ երբեմն զլորվում է նրա գիրկը:

Չը գնալով աւելի հեռու, մասնաւոր չենք հէնց այս տարվայ դէպքերից մի երկուսի վրա: Մեկ հարեւան Եարիմազ գիւղի Ս. Յ.—ի կիւր, երկար տարիներ սպասելով իր ամուսնուն, այս վերջերս վճռել էր գնալ ապրել մի սուլթաղի թուրքի հետ, բայց եղան անհասներ, որոնք համոզեցին յետ կենայ այդ դիտաւորութիւնից: Սրա նման մի դէպք էլ, ինչպէս լուծում ենք, կրկնվել է Արթուրուհու գիւղում Բերկովը այս դէպքերը, մենք ուզում ենք ասել, որ յուստաստութիւնը շատ անգամ մարդուն հասցնում է ծայրահեղութեան, որ հանգամանքները ստիպում են նրան կատարել այն, որից ինքն էլ խուսափում է:

Մի տեղ տեսնում էք՝ գեղջկուհի պառաւը ցնցոտիներով պատած իր նիհար ձեռքերով

բունած նոյնքան նիհար իր փոքրիկ թոռնիկի ձեռքը՝ այս ու այն տիրացուի, գրագէտի կամ տէրտէրի մօտն է գնում, խնդրում, աղերսում, որ սրանք թուղթ անեն եւ կամ խղճան իրան ու մի թունդ նամակ գրեն իր պանդխտ որդուն, որ նա մտաբերէ եթէ ոչ իրան, գոնէ իր փոքրիկներին եւ շուտ վերադառնայ հայրենիք: Բայց մեր դժբաղդ թափառաչըլիկը ոչ թէ չէ լուսւմ իր մօրը, նրա թախանձանքը, այլ նոյն իսկ իր վատակամ կողմէնիւրով (եթէ ունի) չէ էլ բարեհաճում միտիթարել իր թշուառ մօրը: Մի ուրիշ տեղ մատաղահաս գեղջկուհին հիւանդ պառկած է իր օրհինքի հետ անօգնական ու անձար, անհիւղով այն օրը, երբ ինքը լի, փայլուն յոյսերով, երազում էր ամուսնական գեղեցիկ կեանք, իսկ այժմ՝ նա փչրված յոյսերով ընկած է: Չը կան այլ եւս մայրական փաղաքանքով լի ձեռքերը, որոնք նեցուկ էին հանդիսանում իր չարքաշ օրհինք, նա ինքն այժմ մայր է՝ մասնված անողոր ճակատագրի կամքին եւ բարեխիտ հարեւանուհիների խնամքին: Լ. Սանտանաւեան

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒ ԳԱՒԱՌԻՑ

Ճարտար գիւղ, հոկտեմբերի 5-ին Մենք սահմանակից ենք վէյսալու կոչված թրքաբնակ գիւղի հետ եւ մեր վարելահողերը ու արօտանդերը համարեա թէ խառն են միմեանց հետ, այնպէս որ դառնային աշխատանքների ժամանակ զուգ կը տեսնէք թուրք եւ հայ գիւղացիներին միասին բանելիս, իսկ նրանց անասունները յաճախ միասին արածելիս: Ինչ ասել կուզի, որ այս տեսակ պարագաներում, երբ երկու ազգութեան պատկանող գիւղացիների շահերը միտ ընդհարվում են միմեանց հետ, հէնց այդ գիւղացիների բարեխաւութեան համար խաղաղ յարաբերութիւնը եւ բարի դրացիութիւնը ամենանհրաժեշտ պայմանը պէտք է համարել: Բայց այդպէս չէ իրականութեան մէջ: Մի կողմ թողնելով բազմաթիւ մանր գողութիւնները, եւ այստեղ կը յիշատակեն երկու տեսակի ամենատարածված չարագործութիւններ, որոնք գեղեցիկ կերպով կարող են բնորոշել մեր եւ մեր հարեւանների փոխադարձ յարաբերութիւնները եւ որոնք, ի դէպ է ասել, վերջերս կատարութեան ուշադրութիւնն են իրանց վրա գարձիւր:

Արտերը սկսում են կանաչել թէ չէ, եւ անա վէյսալուցիները իրանց խաչներով արածացնում են մեր արտերը: Մեծ ջանք եւ կորով է հարկաւոր գիւղացիների կողմից պահպանելու իրանց յոյսն ու ապաւէնը այս տեսակ աւերմունքից, եւ այդ որոշ չափով աջողվում է նրանց, վարձելով մի քանի պահպաններ: Բայց անա հասան արտերը, սկսվեց հունձը եւ նրա հետ միտժամանակ յարութիւնն սուր վէյսալուցիների անամօթութիւնը: Գիւղերները իրանց սայլերով սկսում են հայրի հնձած խորձերը գողանալ եւ տանել իրանց կայրեր: Ոչ մի գիւղացի չէք գտնի, որ իր կրած գրկանքի համար գանդապում լինի ում՝ հարկն է: Ապա որպէս զի ազատեն իրանց սեփականութիւնը, մեր գիւղացիները ստիպված են լինում գիշերները մնալ արտերում, թէ եւ դա էլ չէ փրկում նրանց բարի դրացիների ուշադրութիւնից: վէյսալուցիները գալիս են մի քանի հոգով եւ բռնի կերպով խլում գիւղացու խորձերը: Իսկ եթէ խորձատերը հակառակվում է դեռ մի լաւ էլ ձեռնում են նրան: Վերջանում է հունձը, եւ սկսվում են երկրորդ ձեւի քաջագործութիւնները: Գիշեր չէ անցնում, որ այս կամ այն գիւղացու անասուններից չը գողանան, չը տանեն: Բայց զարմանալիս այն չէ, որ հայ գիւղացու կողմ կամ եղը գողանում է թուրքը, դա շատ սովորական երեւոյթ է Այն է զարմանալիս, որ այդ աներկիւղ ասպետները հէնց միւս օրը առաջարկում են հայ գիւղացուն, որ իրանց «մի բան» տայ, որպէս զի անցնեն Արաքսի էն կողմը եւ աւաղակներից յետ խլեն բերեն գողացածը: Հայ գիւղացուն քաջ յայտնի է, թէ Արաքսի էն կողմը որքան է հեռու նրա գոմից, բայց եւ այնպէս, 10—25 բուրլի փող է տալիս եւ միւս ասաւօտ նա իր սպրանքի տէրն է դարձաւ: Գլխաւոր դերը այս «առեւտուրի» մէջ խաղում է մի ում Աղալար-բէկ, որին մեծ մասամբ դիմում են գողացածը գտնելու: Այս երկու ձեւի սխրագործութիւնները մեր գանում այնքան են յաճախ պատահում, որ դրանք առօրեայ երեւոյթներ են շարքն են անցել: Նոր չէ այդ երեւոյթը մեր կեանքում, դա քրօնիական բնասորութիւն ունի: Սակայն

